ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 17.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/34

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Օլանդա» ՍՊԸ-ի 01.03.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Օլանդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Օլանդա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 01.03.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի կահավորման ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-18/11» ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգի մի շարք չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օլանդա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Մրցույթի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) 23.02.2018թ. ժամը 15.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժել է «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի (հավելված N 10) ամսաթիվը լրացրած չլինելու համնավորմամբ:

«Օլանդա» ՍՊԸ-ն գտնում է, որ հանձնաժողովը մերժելով Ընկերության հայտը՝ խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ընթացակարգի հրավերով սահմանված պահանջները՝ մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի՝ 4-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը (...):

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ (...):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն

էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Հայտնում ենք, որ «Օլանդա» ՍՊԸ-ն իր կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված կարգով հաստատել է Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը պարունակում է նաև նույն փաստաթղթի հաստատման ամսաթիվը: Հետևաբար, եթե հաշվի առնենք, որ համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը վավերացված է փաստաթղթի հաստատման ամսաթիվը պարունակող էլեկտրոնային թվային ստորագրությամբ, գտնում ենք, որ նշված փաստաթուղթը բովանդակային առումով ամբողջական է և պարունակում է համաձայնագրի հաստատման ամսաթվի մասին տեղեկատվություն:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

Դադարեցնել հանձնաժողովի 23.02.2018թ. ժամը 15.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր «Օլանդա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Աշոտ Վարոսյանը:

2. <u>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 12.03.2018թ. թիվ 01/08/1190-18 գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով հայտարարված մրցույթի մասնակից «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի /հավելված 10/ ամսաթիվը լրացված չէ, որի հիման վրա գնահատող հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի «Գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով

կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 237-Ա հրամանի 10-րդ հավելվածի համաձայն՝ երկու աստղանիշով /**/ նշված դաշտը պետք է լրացված լինի մասնակցի կողմից:»:

Խորհրդում բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ Արմեն Զոհրաբյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից 01.03.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, Բողոքի վերաբերյալ Պատվիրատուի 12.03.2018 թիվ 01/08/1190-18 գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.02.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն ՊՈԱԿ-ի կահավորման ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Օլանդա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 23.02.2018թ. ժամը 15.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ մերժել է «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի (հավելված N 10) ամսաթիվը լրացրած չլինելու համնավորմամբ:

«Օլանդա» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Հանձնաժողովը հայտերի բացման նիստի արդյունքում որոշել է մերժել «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը այն պատճառաբանությամբ, որ հրավերով սահմանված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ամսաթիվը լրացված չէ:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը վավերացված է փաստաթղթի հաստատման ամսաթիվը պարունակող էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը պարունակում է համաձայնագրի հաստատման ամսաթվի մասին տեղեկատվություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 32-րդ կետի՝

• 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Խորհուրդն արձանագրում է, որ «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում լրացված չէ ամսաթիվը, սակայն վավերացված է փաստաթղթի հաստատման ամսաթիվը պարունակող էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագիրը հաստատված է Ընկերության էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որը պարունակում է նույն փաստաթղթի հաստատման ամսաթիվը, հետևաբար «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բովանդակային առումով ամբողջական է:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության կողմից ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտը մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Օլանդա» ՍՊԸ-ի կողմից 01.03.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:
2. Դադարեցնել հանձնաժողովի 23.02.2018թ. ժամը 15.00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ «Օլանդա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**